«Հաստատում եմ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
Ոստիկանության գեներալ-լեյտենանտ
_____ Մ.Բաբայան
«___» _____ 2021թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ Տաթևիկ Արմենի Գևորգյանի՝ « Հանցագործությունների համակցության քրեաիրավական հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.05- «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Թ.Գրիգորյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Մ.Մարկոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Հ.Մ.Խաչատրյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, Դ.Ա.Թումասյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Ս.Մելիքսեթյանի, քննարկեց Տաթևիկ Արմենի Գևորգյանի՝ «Հանցագործությունների համակցության քրեաիրավական հիմնախնդիրները» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների ռազմավարական ծրագիրն ուղղված է նաև նյութական և դատավարական մի շարք օրենքների ընդունմանը կամ կատարելագործմանը՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային լավագույն փորձի վրա: Ըստ նշված ծրագրի՝ մշակվել է նաև Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի նախագիծ: Այս համատեքստում Տաթևիկ Գևորգյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ աշխատանքում անդրադարձ է կատարված նաև նախագծին և որի վերաբերյալ ևս արտահայտված են մի շարք դիրքորոշումներ և մոտեցումներ, ինչն, անխոս, էական նշանակություն կարող է ունենալ քրեական օրենսգրքի նախագծի լրամշակման համար:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ ատենախոսը հաջողությամբ լուծել է հետազոտության խնդիրները, ինչի շնորհիվ իրականացվել է հետազոտության նպատակը, այն է՝ հանցագործությունների համակցության օրենսդրական, տեսական և իրավակիրառ խնդիրների վերլուծությունը և դրա հիման վրա քրեական օրենսդրության կատարելագործմանն ուղղված հանցագործությունների մշակումը: Հետազոտության ճիշտ առաջադրված նպատակն ու խնդիրները կանխորոշել են ատենախոսության կուռ տրամաբանական կառուցվածքը:

Հետազոտությունը սկսվում է հանցագործությունների բազմակիության հասկացության և տեսակների ներկայացնելուց, որի շրջանակներում ատենախոսը ներկայացնում է հանցագործությունների բազմակիության ինստիտուտը քրեական իրավունքի տեսության մեջ և անդրադառնում է հանցագործությունների բազմակիության տեսակներին:

Ատենախոսության երկրորդ գլխում հանգամանորեն ներկայացվում է հանցագործությունների համակցության հասկացությունը, մասնավորապես ներկայացնելով իդեալական համակցությունը և ռեալ կամ իրական համակցությունը՝ նշելով դրանց ընդհանրությունները, տարբերությունները, ինչպես նաև յուրաքնաչյուր տեսակի առանձնահատկությունները: Ներկայացված վերլուծության համատեքստում բացահայտվում են իդեալական և ռեալ համակցությունների սահմանազատման հարցերը, նշելով, որ համակցությունը իդեալականի և իրականի տարանջատելն ընդգծում է մեղավորի հանցավոր վարքագծի բնույթի տարբերությունը, անձին հանրային վտանգավորության գնահատման ժամանակ կողմնորոշում է այդ տարբերությունը հաշվի առնելու անհրաժեշտության հարցում, հնարավորություն է տալիս կատարվածին տալ առավել ճիշտ իրավական գնահատական, թույլ է տալիս լուծելու համակցության տարբեր տեսակների դեպքում անձի դատապարտման իրավական հետևանքների խնդիրը:

Ատենախոսության երրորդ գլխում վերլուծության է ենթարկվում հանցագործությունների որակումը՝ հանցագործությունների համակցության և բարդ հանցագործությունների դեպքում: Ներկայացվում է, թե ինչով է պայմանավորված հանցագործությունների համակցության դեպքում արարքի որակման դժվարությունները, մասնավորապես նշելով, որ քրեական օրենսգրքում առկա են բարդեցված օբյեկտիվ

կողմ ունեցող հանցակազմերով մի շարք հանցատեսակներ, որոնց օբյեկտիվ կողմը կազմող արարքներից յուրաքանչյուրն առանձին-առանձին վերցված պարունակում է ինքնուրույն հանցագործության հատկանիշներ, ուստի որոշակի խնդիրներ են առաջանում հենց այն հարցում, թե արդյոք կատարվածն անհրաժեշտ է համակցությամբ որակել, թե համարել մեկ ամբողջական հանցագործություն և որակել մեկ հոդվածով: Այս հարցի առնչությամբ մի շարք հեղինակների կողմից արտահայտած կարծիքների վերլուծությունը ձևավորում է սույն ատենախոսության տեսագործնական բազան:

Անդրադարձ է կատարվում քրեաիրավական նորմերի մրցակցությանը՝ որպես իրավակիրառ պրակտիկայի բարդագույն խնդիրներից մեկը: Մասնավորապես ներկայացնում է քրեաիրավական նորմերի մրցակցության վերաբերյալ տեսական մոտեցումները, առաջարկվող լուծումները, քրեաիրավական նորմերի մրցակցության պայմաններում արարքի որակման առանձնահատկությունները: Այս համատեքստում հիմնավորված պետք է համարել ատենախոսի առաջարկն առ այն, որ նպատակահարմար կլիներ օրենսդրորեն կարգավորել քրեաիրավական նորմերի մրցակցության հարցը, մասնավորապես՝ քրեական օրենսգրքում սահմանվեր հանցանքների համակցության և քրեաիրավական նորմերի մրցակցության տարբերակման, քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում արարքի որակման հստակ դրույթներ, ինչպես նաև սահմանվեր քրեաիրավական նորմերի մրցակցության հասկացությունը և տեսակները սահմանող նորմ:

Ատենախոսության չորրորդ գլխում հետազոտման է ենթարկվում հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու ընդհանուր դրույթները և դրանց կիրառման առանձանահատկությունները, նշելով պատժի նշանակման սկզբունքները, թե ինչպես է հանցանքների համակցության դեպքում որոշվում պատժի նշանակման հարցը այլ պետություններում, նշվածը հանգուցալուծվում է հիմնական եզրակացությամբ առ այն, որ հանցագործությունների համակացությամբ վերջնական պատիժը որոշելիս պետք է առաջնորդվել կատարված հանցանքներից ամենածանրի համար նախատեսված առավելագույն պատժաչափով, ինչն արտացոլում է տվյալ անձի հանրային վտանգավորության աստիճանը:

Անդրադարձ է կատարվում հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու և արարքների որակման առանձնահատկություններին՝ Արցախի դատական

պրակտիկայում, նշելով, որ նշվածի վերաբերյալ Արցախի դատական պրակտիկայում հիմնական խնդիրն օրենսդրական կարգավորումների մեջ է, ինչը հետագա խոր հետազոտությունների անհրաժեշտություն ունի:

Եզրակացության մեջ ատենախոսն ամփոփում է կատարված հետազոտության արդյունքները, մատնանշում ատենախոսության առավել նշանակալի դրույթները, շարադրում է հիմնական հետևություններն ու առաջարկությունները:

Միանշանակ դրական գնահատականի են արժանի ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնցով ապահովվել է աշխատանքի գիտական նորույթն անգամ այն պայմաններում, որ հարակից թեմայով վերջին տարիներին եղել են ատենախոսությունների պաշտպանություններ:

Հատկանշական է, որ հեղինակի կողմից ներկայացված թվով 19 առաջարկությունները և եզրակացությունները ունեն ոչ միայն գիտական նշանակություն, այլ նաև կարող են ուղղորդող նշանակություն ունենալ իրավակիրառ պրակտիկայի համար:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական բազայով, գրականության աղբյուրների մեծ քանակության օգտագործմամբ: Այս ամենը թույլ է տալիս ատենախոսի հետևությունների և առաջարկությունների գերակշիռ մասը համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրան:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Ատենախոսության առաջին գլխում վերլուծելով հանցագործությունների բազմակիության ինստիտուտը, դրանից բխեցնում է հանցագործությունների բազմակիության սահմանումը և այն ներկայացնում աշխատանքի եզրակացության մեջ (էջ 99) հետևյալ կերպ՝ «Հանցագործությունների բազմակիություն է միևնույն անձի կողմից երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքների կատարումը, եթե չեն վերացել քրեաիրավական և քրեադատավարական հետևանքները. անձը չի ազատվել քրեական պատասխանատվությունից քրեական

օրենքով սահմանված կարգով կամ չի մարվել կամ հանվել դատվածությունը, կատարված երկու հանցագործությունների կապակցությամբ առկա է քրեական վարույթ կամ քրեական հետապնդում իրականացնելու քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմք»: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ սահմանման բնորոշում ներկայացնելիս անհրաժեշտ է դրսևորել որոշակի «զգուշավորություն» այն հանգամանքի հաշվառմամբ, որ սահմանման մեջ տրված եզրությունները պետք է վերաբերելի և գնահատելի լինեն նաև այդ երևույթի (տվյալ դեպքում՝ բազմակիության) և երևույթի մասի (տվյալ դեպքում՝ բազմակիության տեսակների) համար ևս: Մասնավորապես, իրական կյանքում կարող են լինել այնպիսի իրավիճակներ, երբ միևնույն անձի կողմից կատարվի երկու հանցանք, որոնք բավարարեն բազմակիություն մեջ տրված չափանիշներին, սակայն որևէ կերպ չընդգրկվեն դրա տեսակներից և ոչ մեկի մեջ: Օրինակ, դիտավորությամբ հանցանք կատարած արարքի համար դատվածություն ունեցող անձի կողմից նոր անզույշ հանցանք կատարելը:

2. Ատենախոսն իր աշխատանքի 17-րդ էջում անդրադարձել է շարունակվող հանցագործության գործերով միատեսակ դատական պրակտիկա ձևավորելու համար ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշման և այն գնահատել «ճիշտ չէ» եզրույթով: Բնավ չբացառելով իրավական դոկտրինում դատական ակտերը քննադատելու, դրանցում արտահայտած դիրքորոշումները չկիսելու հնարավորությունը, սակայն տվյալ դեպքում բարձրագույն դատական ատյանի (բացի սահմանադրականության հարցերով) կողմից արտահայտած դիրքորոշմներից տարբերվող դիրքորուշում հայտնելու համար հեղինակի կողմից անհրաժեշտ էր ներկայացնել առավել բարձր շեմ հաղթահարող գիտական հիմնավորումներ:

3. Աշխատանքի 21-րդ էջում հեղինակը, անդրադառնալով տևող հանցագործությունների որոշ դեպքերին, նշում է, որ այն դեպքում, երբ տևող հանցանքի համար անձը դատապարտվում է և որից հետո շարունակում է կատարել տևող հանցանքը, ապա այն պետք է ստանա ինքնուրույն գնահատական: Ցանկալի կլիներ հեղինակի կողմից առավել հանգամանալից անդրադարձ կատարվեր տվյալ դեպքերին, հաշվի առնելով նաև տվյալ դեպքում non bis in idem սկզբունքի խախտման հնարավոր ռիսկը:

Առկա է նաև տեխնիկական դիտարկում, օրինակ 64-րդ, 65-րդ, 66-րդ էջերում տեքստի որոշ հատվածներ իրենց տեսքով առանձնանում են ընդհանուր աշխատանքից, ընդ որում, պարզ չէ նաև այդ տեքստի առանձնացման նպատակը:

Հետևություն. Տաթևիկ Արմենի Գևորգյանի ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է հանցագործությունների համակցության քրեաիրավական հիմնախնդիրներին վերաբերող համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ. 00-05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Տաթևիկ Արմենի Գևորգյանի՝ «Հանցագործությունների համակցության հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ոստիկանության փոխգնդապետ Հ.Մ.Խաչատրյանի կողմից: Քննարկվել և հավանության է արժանացել քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի 2021թ. ապրիլի 5-ի նիստում, արձանագրություն № 12:

Ամբիոնի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ոստիկանության փոխգնդապետ Հ.Մ.Խաչատրյան

Հ.Խաչարյանի ստորագրությունը հավաստում եմ:
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի
Տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ Գ.Գ.Մալխասյան